

առաքելոյն՝ և կաթողիկէ Եկեղեցւոյ հետ, Հակառակ այն թուութեան՝ որ հեթանոսութենէ մնացած էր, մեծն Երեսէս, կ'ըսէ Փաւստոս, Աշտիշատու ժողովով սահմանեց՝ զգի լինիցին յամուսնութեան օրինաւորը. մի՛ ստել և մի՛ դաւ բերել իւրեանց ամուսնութիւնընդալ կողմանց՝»։ այսինքն է երկուստեք հաւատարիմ մնալ ամուսնական կապին։ Եւ կը յարէ պատմիչը՝ թէ «յաւուրսն Երեսիսի հայրապետին ոչ որ իշխեր ի նմանե հսեկ կամ բողոյ զկի իւր զամուսնի յամուսնայն երկիրն Հայոց»։ և ոչ այլ առնել միւսանգամ իշխէր որ համարձակելը։ Իսկ յետ իւր մահուան՝ Պապի թոյլտուութեամբ տիրեց անկարգութիւնը ժամանակ մը՝, Եզնիկ նոյնպէս հակառակ է ապահարգանի. «Աստուած, կ'ըսէ, ի բնէ կարգեաց՝ թէ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։ Զհետ կնոջ իւրոյ առէ, և ոչ զհետ կանաց։ Չի և զտաղջին սահման բնութեանն հաստատեցէ, սասց տէր ի սուրբ աւետարանսն՝ թէ Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեցէ՜»։ Այսպէս և Մանգակունիս՝ վասն կնոքորաց ճառին մէջ մեկնելով Պետրոսի խօսքը, «Արք իմաստութեամբ բնակեցցին ընդ կանայս», կը յարէ. «և ոչ ստեղծեամբ ինչ հեռանալ հրամայէ. զի... որ զկինն իւր առէ, անձնասպան է։ Այլ թէ վասն չքաւորութեան ոք որդւոյ տանիցէ ստեղծութիւն ընդ ամուսնոյ իւրոյ, շար է առաջի Աստուծոյ»։ ուր ստեղծեամբ՝ անոր յաջորդող կնահանութիւնը կ'իմանայ։

Այսպէս հայ եկեղեցին իւր առաջին շրջանին սերտիւ կապուած էր կաթողիկէ Եկեղեցւոյ հետ՝ իբրև «մի մարմին և մի հոգի» ըստ առաքելական բացատրութեան, կամ իբրև իւր մօր հետ՝ ըստ Եղիշէի. կապուած նուիրապետօրէն, վարդապետութեամբ ու սրբարար խորհուրդներով. և իւր դրօշին նշանն ըրած էր առաքելոյն

սահմանը, « մի տէր, մի հաստք, մի մկրտութիւն»։ Այս սահմանն ամբողջ պատահեց նաև յետ հայրապետական աթոռին անկախութեան, որ գծտութեան արդիւնք էէր՝ ըսինք՝, մինչև որ հասաւ եկեղեցական բաժանումը։

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅ ԲՈՒՇԱԿԱՆ ԶԵՆՈՎԻԻՐ

ՅԱՌԱԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՐԱՊԱՏԻՆԻՆ ԱՄԻՐՏՈՒՎԱԹԱՅ

(Շար. տես Բազմ. 1927, էջ 166)

Պատճառ հասկանալոյ զխառնուած դեղերն՝ որ զհիւանդի ստածնն. և է որ թրիագութիւն այլ առնէ և զմահացու դեղերուն շարքութիւն խափանէ, և ուզեան և կամեցան որ չիտեն. վասն ստածման հիւանդին, և թրիագ այլ լինի՝ որպէս աւագ մանուկնին, և աւագ թրիագն, և մասրի ստոտն, և զալիօնն որ է՝ զալիսայ, և որ սոցին նման է. այն պատճառովն եղև այս խառնուիլն, և այլ շատ պատճառ կայ, որ մէկ մէկ դեղով ստացուի չի լինի, և այն բժշկապետքն որ կարծողք էին, հասկցան և իմացան, որ այս դեղերու խառնուիլն ճշմարիտ է, և այս բժշկապետաց թուպին լաւ է։

Թէ մարդ ի նաւ մտնելու լինիս, գ. օր յառաջ հանց կերակուր պիտի՝ որ զըստամոքն յուստովցնէ, որպէս սերկելիլ շարպա. ինծօրի, զարծիլ, նոսն, ազոբի, որն օր լինի՝ որ զըստամոքն ի վերբերութենէ պահէ։ Եղլի՛ և քաղցրէ պատրաստ կալ. առջի օրն երբ մտնօ՛ ի ծով մի հայիր, և հոտ մի առնուլ։

Երրորդն՝ որ յիշեց՝ զկիւրքն, և զսահմանքն, առ. դեղերուն, և զխառնուած դեղերուն զօգուութիւն՝ որ շկայ ի մէկ մէկ դեղերն, և ի խառնուած դեղերն՝ զօրութիւն մի կայ, որ ի յայցեղ դեղեր՝ որ առ. առնուիլ, և այլ ուժովն այն է, որ մէկ զօգվածի համար լինի, և հանց ստածուի լինի զօգուածին՝ որ ի ըստամոքն հետու լինի, և պատեն է՝ որ իր օգտութիւն պատուական է՝ և ընդունելի է, և խառնուած է յիրար. բայց սակից շատ տնօր՝ և ի վերս այսոր այլ իրք մի տար ի գեղէն որ զուժն լվատուծէ. Եւ

1. Ա կոր. Է, 11. — 2. Փատ. 76. — 3. Փատ. 229. 4. Եզնիկ, 81. — 5. Մանգ. 198. — 6. Բզմ. 1926, 194-5.

ասացած է թէ՛ օգտութիւն՝ ֆլան դեղի՛ սյս ինչի աղէկ է, և օգնէ անոր համար որ հնչտու-
 թեամբ և անուշտութեամբ փարատէ գհիւանդն։
 Եւ այլ ասացած է թէ՛ այս ինչ դեղի՛ զօրու-
 թիւն շար է՛ այնոր համար, որ յիւրմէն դժուա-
 րութիւնով խալըսի մարդ, և շատ դժար կայնէ։
 Եւ այն որ իւր շարութիւն միջակ է, և ւ. զօ-
 դուածի մի յօգտութիւն անել է, պիտի որ ան-
 կից քիչ մի այլ խառնես իր օգուութեան համար։
 և այն զօգուածքն որ քստամօքին մօտիկ է, և
 յայն դեղերն որ յիշեցաք քիչ խառնել կու պիտի՛
 վասն՝ այնոր համար որ ուժով է. բայց շատ
 օգուութիւն ունի, պիտի որ ոչ շատ անել լինի՛
 և ոչ պակաս, և այն դեղն որ խիտ ուժով է, չի
 պիտի որ շատ խառնես։ Եւ այն դեղն որ խիտ
 ուժով է, և օգուութիւն քիչ է՛ յիւրմէն այլ քիչ
 պիտի խառնել՝ որ մուհտատիլ լինի։ Եւ այն
 դեղն ուժով չէ, և օգուութիւն շատ է. յանկից
 շատ խառնել կու պիտի, որ օգուութիւն լման
 կատարի, և այն դեղին ուժով՝ որ միջակ է, և
 օգուութիւն այլ միջակ է։

Չորրորդ՝ յիշենք զդեղերն թէ՛ ինչպէս յիրար
 խառնեն և շինեն զամուսնին, և այտնք՝ որն
 մամուսնի է, որն դուստր է, որն հապեր է, որն
 պատուպանի է, և որն շափն է, որն տիմէզի է,
 որն մաշամի է, և այլ որ սոցին նման է։

Յորժամ ուզենաս որ դեղ շինես՝ յառաջն զդե-
 դերն նանաչել կու պիտի և ընտրել, զաղէկն առ-
 նուն և զհողն ի միջին ընդրեն, և թէ՛ այլ ցեղ
 իրք խառնել է ընդրեն, և յստակեն, և զփտածն
 և զանբածն ի մէջին հանեն, և զայն դեղերն
 որ ծեծուելու է ի զափրանին շաղաջն աղայ,
 և ի քարէ հաւանն ծեծէ, և ապրչումի մաղով
 մաղէ. և այն դեղերն որ մանր ծեծելու է, իր
 թարփիպն աղէկ լինի, և օգուութիւն լման, և
 այն դեղերն՝ որ ի ճուղարինչ կու մտէ՛ չէ՛ պա-
 տեն որ մանր ծեծուի։ Ասացել է զԵլիանոս՝
 վասն ճուարիչ քամոնուն համար, թէ՛ շինեցի և
 ի թան տարայ զայս ճուարիչն, և զայն օգուու-
 թիւն որ կ'ուզէի չի գտայ. բայց զզոն յորդո-
 րեց և ցաւ տեսայ յիւրմէն ինձի տրտութիւն
 ընկաւ, և վախեցայ թէ՛ իմ բնութիւնն անբեր
 է, այնոր համար այս դեղս ինձի օգուութիւն
 շարար և զէն արար, և յետոյ միտք արի, որ
 ծեծած էր խիտ բարակ, և յետոյ զարծեալ չի-
 նեցի, և զօգուութիւն գտայ, և ս. ճուարիչուն
 խառնուածն բարակ չի պիտի, և զդեղերն զատէ
 գտա ծեծել կու պիտի, և զկշիւն լման պիտի
 այնէլ, և զթարփիպն այնոց որ զամբերն է՝ և
 քամութիւն է, զայնոնք զինով, և կամ այլ իրօք

պիտի, գրշել և դրորել, և ի հաւանն սղկել որ
 միտարի։ Եւ զայն որ ի միւրն խառնելու է՝
 զծեծած դեղերն ի վրայ ցանէ և շաղէ, և զայն
 որ ի ձմուն կու շարծես, զմողն, Գ. դեղերուն
 շափ արայ և խառնէ զդեղերն և շաղէ։ Եւ այն
 որ ամառն խառնելու է՝ և շաղելու է՛, Բ. դե-
 դերուն շափ արայ՝ և զմողն՝ յստակէ, և զմոժն
 զատէ յիւրմէն, և զփրփուրն առ, և զդեղն հանց
 աման դիր՝ որ, դ. մատն թերի լինի. դեղ կայ
 որ կու նոայ՝ և շքին կու ելանի, որ շաւրի է
 և զամանն չկոտրէ, և զմեծ մաճունին խառնել
 և շարժել կու պիտի, և շունչն ելնէ և պահեն,
 Եւ զխուստերն լինելու. յառաջն զդեղերն մանր
 ծեծեն, ի հաւանն մէջն վարդի շրով, և զզուու-
 սին զօտարան ի հետն շաղէ, և զվարդէ՛ղուն
 քիչ քիչ ի վրայ լից՝ և ծեծէ և շաղէ և զուր-
 արայ, և ի շուքն չորցու, և ամէն վաղ և երե-
 կայ շրջէ, և ի միսէ և ի փոշոյ ի զատ պահէ.
 մինչև չորնայ, և չ'աւրիւրի. Եւ թէ՛ զուրուուք
 շինես, յառաջն զուրքն յիտակէ և լուայ, և
 լուանալն ստէ. բուովանդ շինի՛ և զուրքն ծեծէ,
 և ի շարէ անցոյ, և ի հաւանն դիր՝ և զշուրն
 ի վերա կաթեցոյ և տրորէ և քամէ ապրչումն։
 Եւ զհապերն, որ է՝ մուղի՛ և քիթրայ, և այլ
 խէժեր որ կայ, վարդէ՛ղով գրջէ, որպէս յառ-
 ոայն եմ յիշեր. որ տրորես ի հաւանն, և զա-
 դերն ի վրայ ցանէ և ծեծէ՛ որ շաղի և հապ
 շինէ։ Եւ զմատուպանն դեղերն շրով գրջէ, և
 եփէ հահանդ կրակով՝ որ ուժն չիւրթայ, զմտու-
 շակն, և զափթիմանն, և զանբիտան և այտնց
 ամանուն ուժքն քարշէ, և չ'է պատեն որ շատ
 եփեն կու այրի, և այլ պաղի պեղերն որ եփե-
 լու մտենայ ապայ ի մէջն ձգէ, որ ւ. ժամ
 կենայ, և չ'է պատեն որ շերեփով տրորեն, և
 սպրկիկ կտակով քամէ, և յստակէ, և թէ՛ հաժն
 խիտ գէշ լինի, խիտալմալարն այլ ի յայտ ցեղե-
 րուն է, Խուրբ է, եփելով ուժն կու խափանի, և
 հաժն այլ կու փոխի, չ'է պատեն եփուիլն. և մա-
 տուպն որ քամած լինի, տրորէ և խառնէ՛ որ հալի
 ի մէջն և շերխիտան այլ ստէ. շինիլիւ. և ի մատ-
 պուխն կուհալի, և զհնդի՛ աղն. որշափ որ պիտի
 խառնէ, և թրպութն՝ և դարդոնն, և որ նման
 է սոցա, յաւել խառնել կու պիտի, և թէ՛ հապ
 անեն՝, օ. դր. խառնէ, և ի մատուպան, Բ.
 տր. խառնէ, որ գիւր գործն առնէ։

Նիւրեղերուն՝ որ յիշէ՛ զդեղերուն շինելն և
 զայրինչ, և զտապկենչ, և զհալելն։ Յառաջն
 կտուէ՛ յիտակ, և մաղէ, և այն որ եփելու է
 եփէ, և քամէ զշուրն, և հոտով ձէթով, և պա-
 խուր եղով տապկէ, և չ'այրես զհունդն խորո-


վելն, և տապկելն. յառաջն յիտտակէ, և նոր պուտուկով տապկէ. և յայնս, և նոր պուտուկովն յիրակն դիր և տապկէ, և պուտուկն տաք կայ, և դեղին հոտն ելանէ և չ'այրի: Եւ զպիկին ի կրակն ձգելն որ այրի և կարմրի և քանի մի հեղ սո. արա մինչև մանրի, և զքարերն այլապէս լուանան, ի յայնից դեղերն, որպէս թուփան՝ և շատանն, և զլէմբան, և որ նման է սոքա. յառաջն պիտի որ կամակէ՛ յիտտակ շրով ի հաւանն ծծծնէ, և քիչ շուր լից և ի չիին աման փոխէ՝ և շրջէ՛ որ ամէնն ի շուրն ելանէ և ի տակն նստի և առնուս և պահես: Եւ զմարգարիտն ք և զպէսէտն, իր ի մուֆարենն կու մտէ, այսպէս լուայ զպէսէտն, և զսասաֆն, և զքարուպան, և որ սոցին նման է, զամէն մէկ ի նոր կնիճ դիր, և ի տիին հեքամթով ծծփէ, և ի տաք թոնիր դիր որ աղէկ այրի, և այն որ Խաղութն է, և եաշմն է, և որ նման է սոքա, ծծծել կու պիտի և ի պաղ շուրն ձգել, և թասովի այնել: Եւ զսարատանն այրելի սո. է. յամոնան աւուրքն որ արեգակն ի յառիւծն մտել լինի, և զտոններն կտրեն, և զփորն յտապեն և լուանան՝ և ի նոր պուտուկ դնեն և ծծփեն զքերտանն, որպէս յառաջն ստացի, և ի տաք թոնիր դնեն, և զկրակն քաշն սպայ դնեն, որ մտիւր չիին՝ յայրեն և խորվի, և թէ յապիկին յաման դնես այլ աղէկ լինի: Եւ զկորն որ ի մանուկն յախրապին մտէ, սո. այրել կու պիտի զկորն այրելն որպէս յառաջն յիշած է. ի շիշային մէջն դնել կու պիտի և հաւած մտի ի վրայ և Ժ. դր. ձէթին: Բ. դր. մոմ պիտի, և կամ Բ. և կէս պիտի. և զտիմէտինն սո. չիւնել կու պիտի, և զքամուքան, և զայլ դեղերն քիչ քիչ ի վրայ խառնէ իմում ըտուղանն, և հաւան ձեռօք հար աղէկ՝ և մահրաթն, և տիւմէտն, այսպիսի կերպովս: Եւ ամենայն մում ըտուղան որ ամանն աւուրքն շինուի. Ժ. դր. ձէթ. Գ. դր. մոմ յիրար խառնէ. և ձմանաւ աւուրքն. Բ. դր. մոմ, Ժ. դր. ձէթ խառնէ: Եւ զձէթերուն շինելի սո. արայ. թէ հունգ է, և թէ խոտ է, որ ի ձէթերն մտնու, յառաջն ձարձատէ, և ի շուրն դրջէ որ մի և զինը մի, և շուրն այնչափ պիտի, որ ծածկէ զդեղերն, և մէկ այլ օրն հոցու, և ձեռօք անէ և քամէ և խառնէ չիրիկ ձէթ՝ և հոցու՝ որ շուրն երթայ և ձէթն մնայ: Եւ թէ դեղերն նուրբ լինի՝ զգեղն ի շինի աման դիր, և կամ ի շիշայի մէջ դիր՝ և զշիշան ի պուտուկն դիր, և շրով հոցու որ եփի և քամէ, և դարձնալ ի շիշան դիր և ձէթ լից ի վերայ և հոցու որ շուրն երթայ և ձէթն մնայ»:

Նոս կ'աւարտի ամբողջ Յառաջաբանութիւնը, վերջը ունենալով կարևոր Յիշատակարան մը, որ Ամիրտոլմաթի տիտղոսները կը յայտնէ, և է՝ հետեւեալը:

« Եւ կատարեցաւ առաջաբանութիւն աղբաւ. « պատին՝ կամօքն Աստուծոյ: Եւ յիշեմ մէկ քանի բան մի այլ թէ պատեանն ինչ է որ « այս առաջաբանութիւնս գրեցաւ. տեսայ նոս « անպիտան ծառայ աստուծոյ Ամիրտոլուաթս, « ի թվականութեան հայոց, ՋԼ: ապրիլ ամ. « սոյ՛ ի գ. ի տնի աւետման սրբոնոյ Աստուա, « ծածնին՝ ի վայրաքաղաքն ի կոստանդինուպո. « լիս, և զտաք շատ աղբապատիննի, որ գրած « էր հայոց լիզով, և զինչ որ կու յիշէին զայս « շինուած իրացս զպատեանն չի գիտէին՝ թէ « այս յէր էր, և զդեղերուն թապարլն չգիտէին, « և զինչ որ կու շինուէր չէր աղէկ՝ ի գործն « պակասութիւն կայր, և չէին գիտել զայս ա. « ռաշաբանութիւնս, և մեք զրեցսք և յայտ. « նեցսք, զի ով որ ի յայս արուեստս հետեի, « նայ իւր շինած դեղերն պակասութիւն չգտուի, « կամօքն Աստուծոյ, և զիս՝ հառապաշի՛ և « պոստանձի պաշի՛ յիշեցէք ի տէր »:

Շարի չեմ տեսներ քացատրութիւններ տալ Յառաջաբանութեանց մէջ յիշուած դեղերու կամ բոյսերու մասին, երբ գիտենք թէ անմահն Հ. Ղ. Ալիշան իր «Հայրուսակ»ին մէջ անոց վրայ գրած է նոյն տեղեկութիւններ:

Բարից 1927 ՏՌԲՊ. ՎԱՆԱՄ Գ. ԹՈՐՈՍԵԱՆ



ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ ԳՐԵԼԻՔ

Ա.

Թաղէտս Աւգարէկեանս¹ փառատոս Բիււզանդացւոյ հետեւեալ խօսքերուն մէջ « Ըււնապոյրն ընդ Եղչերա և », գտնուէ է մի անմեղ պատասխան Միբրուժանի այս հարցմանը. « Ընանապարհս ի Բագրկանդ ընդ ո՞ր երթայ »: Եւ Միբրուժանի զայրոյթն ուղեւորների դէմ արդարացնելու համար, Եղչերա ուղղելու հարկ տեսած է, փոխելով յՄիդրարս, թիւզաղբիւղով զգլուճն իւր ուրաջութեան: Սակայն Աւգարէկեանի

1. «Հանդես Ամսօրեայ»ի 1926 ասորայ 7-8 միտքեալ Թուրքում, էջ 384-387.